

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 6, 2008.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

COPLAND v. THE UNITED KINGDOM - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

**ՔՈՓԼԱՆԴՆ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ**

2007թ. ապրիլի 3-ի վճիռը

COPLAND v. THE UNITED KINGDOM

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

6. Դիմողը ծնվել է 1950 թվականին և ապրում է Ուելսի Լանելլի բնակավայրում:

7. 1991 թվականին դիմողն աշխատել է Քարմարթենշիրի քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ): Քոլեջը Պետության կողմից ղեկավարվող պետական մարմին էր՝ օժտված հետագա և բարձրագույն կրթության մասին 1992 օրենքի 18 և 19-րդ հոդվածներով սահմանված լիազորություններով:

8. 1995 թվականին դիմողը դարձել է քոլեջի տնօրենի (ՔՏ) անձնական օգնականը, իսկ 1995 թվականի վերջից նրանից պահանջվել է սերտորեն համագործակցել քոլեջի տնօրենի նորանշանակ տեղակալի (ՏՏ) հետ:

9. 1998թ. հուլիսին՝ ամենամյա արձակուրդում գտնվելու ընթացքում դիմողը (իգական սեռի) արական սեռի ներկայացուցիչ տնօրենի հետ այցելել է Քոլեջի ճամբարներից մեկը: Հետագայում նա իմացել է, որ ՏՏ-ն հեռակապվել է այդ ճամբար՝ հետաքրքրվելով նրա այցելության մասին, և հասկացել էր, որ ՏՏ-ն իրեն առաջարկում է անպատշաճ հարաբերություններ ունենալ տնօրենի հետ:

10. Քոլեջում աշխատելու ընթացքում դիմողի հեռախոսը, էլեկտրոնային փոստը և ինտերնետը ՏՏ-ի դրոմամբ ենթարկվել էին հսկողության: Համաձայն Կառավարության վարկածի՝ հսկողությունը կատարվել է՝ համոզվելու համար, թե Քոլեջի գույքը դիմողն անձնական նպատակներով չափից ավելի չի՞ գործածում, արդյոք: Կառավարությունը նշել է, որ հեռախոսի գործածության հսկողությունը կայացել է նրանում, որ ստուգվել են Քոլեջի հեռախոսային հաշիվները, որոնցում առկա էին հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունների ամսաթվերը, տևողությունը և արժեքը: Դիմողը նաև հավատացած է, որ կատարվել է հեռախոսագրույցների տևողության, ստացված և կատարված հեռախոսագանգերի թվի և իրեն զանգահարած անձանց մանրամասն և համակողմանի ուսումնասիրություն: Նա նշել է, որ առնվազն մեկ դեպքում ՏՏ-ն տեղյակ է եղել իր հետ հեռախոսային կապի մեջ գտնվող անձի ինքնության մասին: Կառավարությունը հայտնել է, որ հեռախոսի գործածության հսկողությունը տևել է ընդամենը մի քանի ամիս՝ մինչև 1999թ. նոյեմբերի 22-ը: Դիմողն առարկել է՝ ասելով, որ իր հեռախոսագրույցների հսկողությունը կատարվել է 18 ամիս շարունակ՝ մինչև 1999թ. նոյեմբեր:

11. Դիմողի ինտերնետը ևս հսկվել էր ՏՏ-ի կողմից: Կառավարությունն ընդունել է, որ այդ հսկողությունը կատարվել է այցելած կայքերի, դրանցից յուրաքանչյուրն այցելելու հաճախականության, ամսաթվերի ու տևողության վերլուծության ձևով, և որ հսկողությունն իրականացվել է մինչև 1999թ. հոկտեմբերից նոյեմբեր: Դիմողը չի առարկել ինտերնետի գործածության հսկողության ձևերի դեմ, սակայն հայտնել է, որ հսկողությունը իրականացվել է Կառավարության նշածից շատ ավելի երկար ժամանակահատվածում:

12. 1999թ. նոյեմբերին դիմողը տեղեկացել է, որ աշխատավայրից հարցումներ են կատարվում իր կողմից էլեկտրոնային փոստի գործածության մասին, այն բանից հետո, երբ Քոլեջից զանգահարել էին նրա խորթ դստերը և խնդրել տեղեկություն տրամադրել իր կողմից Քոլեջ ուղարկված էլեկտրոնային նամակների վերաբերյալ: Դիմողը գրել էր ՔՏ-ին և հարցրել՝ տեղի ունեցածն ընդհանուր հետաքննության՞ արդյունք է, թե՞ հենց իր էլեկտրոնային փոստն է ենթարկվում քննության: 1999թ. նոյեմբերի 24-ին ուղարկված էլեկտրոնային նամակով ՔՏ-ն դիմողին հայտնել է, որ էլեկտրոնային փոստի համընդհանուր ստուգումներից զատ, Քոլեջի տեղեկատվական բաժանմունքը, ՏՏ-ի պահանջով, քննության են ենթարկում միայն իր էլեկտրոնային նամակները:

13. Կառավարությունը հայտնել է, որ էլեկտրոնային փոստի հսկողությունը կատարվել է էլեկտրոնային փոստի հասցեները, ուղարկված նամակների ամսաթվերը և հաճախականությունը վերլուծելու ձևով, և որ հսկողությունը կատարվել է 1999թ. նոյեմբերի 22-ին նախորդած մի քանի ամիսների ընթացքում: Ըստ դիմողի՝ էլեկտրոնային փոստի հսկողությունն իրականացվել է առնվազն վեց ամիս շարունակ՝ 1999թ. մայիսից մինչև 1999թ. նոյեմբեր: Նա փաստացի ապացույցներ է ներկայացրել՝ 1999թ. մայիսի 14-ից մինչև 1999թ. նոյեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից էլեկտրոնային փոստի գործածության վերաբերյալ մանրամասն տպագիր նյութերի տեսքով, որոնցից երևում էր իր ուղարկած նամակների ամսաթիվն ու ժամը՝ հասցեատիրոջ հասցեի հետ մեկտեղ:

14. 1999թ. նոյեմբերի 29-ին ՔՏ-ն ներքոշարադրյալ բովանդակությամբ գրություն էր հղել ՏՏ-ին՝ հաստատելով նախկինում իրենց ունեցած խոսակցության բովանդակությունը.

«Անորոշությունից խուսափելու նկատառումներից ելնելով՝ կարևոր են համարում վերահաստատել նախորդ շաբաթ Ձեզ արտահայտած իմ տեսակետները [դիմողի] էլեկտրոնային փոստի վերահսկման վերաբերյալ:

Այն բանից հետո, երբ [դիմողը] տեղեկացավ, որ [Քուլեջից] ինչ-որ մեկը հսկում է իր էլեկտրոնային փոստը, ես խոսել էի [ST]-ի հետ, ով հաստատել էր, որ դա իրականություն է, և որ դա արվել է Ձեր դրոմամբ: Քանի որ ընդունվելիք օրենսդրությամբ կազմակերպությունների կողմից առանց թույլտվության որևէ մեկի էլեկտրոնային փոստի հսկողությունն անօրինական է համարվելու, ես իսկապես մտահոգվեցի վերջին իրադարձությունների առնչությամբ և [ST]-ին հրահանգեցի այլևս որևէ վերլուծություն չիրականացնել: Այնուհետև ես Ձեզ խնդրել էի նույն կերպ վարվել և [դիմողի վերաբերյալ] ցանկացած տեղեկատվություն, որը Ձեզ մտահոգիչ է թվում, առաջնահերթ կարգով փոխանցել ինձ: Դուք նշել էիք, որ կբավարարեք երկու խնդրանքները՝ միաժամանակ վերահաստատելով [դիմողի] վերաբերյալ Ձեր մտահոգությունները»:

15. Քուլեջում այդ ժամանակ չի գործել աշխատողների հեռախոսակապի, էլեկտրոնային փոստի կամ ինտերնետի գործածության նկատմամբ հսկողության որևէ կանոնակարգ:

16. Մտավորապես 2000թ. մարտին Քուլեջի անձնակազմի այլ անդամներ դիմողին հայտնել են, որ 1996թ.-ից մինչև 1999թ. վերջերն ընկած ժամանակահատվածում իր մի շարք գործողություններ հսկվել են SS-ի կամ նրա հանձնարարությամբ հանդես եկող անձանց կողմից: Դիմողը նաև հավատացած էր, որ այն մարդկանց, ում հետ ինքը խոսել է հեռախոսով, հետագայում զանգահարել են նաև SS-ն կամ նրա հանձնարարությամբ հանդես եկող անձինք՝ գրուցակիցների ինքնությունը և զանգի նպատակը պարզելու համար: Բացի դրանից, նա վստահ էր, որ SS-ն տեղյակ է եղել նաև իր փաստաբաններին թույլատրելի սահմաններում իր ուղարկած ֆաքսի մասին, և որ իր անձնական գործունեությունը՝ թե՛ աշխատանքի, թե՛ ամենամյա կամ առողջական պատճառներով արձակուրդում գտնվելու ընթացքում, ենթարկվել է հսկողության:

17. Դիմողը Դատարանին ներկայացրել է անձնակազմի այլ անդամների ցուցմունքները, ովքեր ևս հաստատել են իրենց գործունեության նկատմամբ անհիմն և անպարկեշտ հսկողությունը: Դիմողը, ով մինչ օրս աշխատում է Քուլեջում, ենթադրում է, որ SS-ն հեռացված է աշխատանքից:

II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

A. Գաղտնիության մասին օրենսդրությունը

18. Տվյալ ժամանակահատվածում անգլիական օրենսդրությունը գաղտնիության ընդհանուր իրավունք չէր նախատեսում:

19. Մարդու իրավունքների մասին 1992 օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2000թ. հոկտեմբերի 2-ից ի վեր դատարաններից պահանջվում է հիմնական օրենսդրությունը հնարավորինս մեկնաբանել և կիրառել կոնվենցիոն իրավունքներին համապատասխան: Օրենքով նաև անօրինական են համարվում հանրային իշխանության ցանկացած մարմնի, այդ թվում դատարանի՝ կոնվենցիոն իրավունքներին հակասող գործողությունները, եթե այդ գործողությունները պայմանավորված չեն Հիմնական օրենքով՝ դրանով իսկ նպաստելով հանրային իրավունքի կատարելագործմանը՝ կոնվենցիոն իրավունքներին համապատասխան: *Douglas v Hello! Ltd* ([2001] 1 WLR 992) գործով Սեդլի L. Ջեյը նշել էր, որ ինքն սպասում էր, որ անգլիական օրենսդրությունը նախատեսում է գաղտնիության սահմանափակ իրավունք, սակայն վերաքննիչ դատարանը խնդրին չէր անդրադարձել:

20. «Հետաքննության լիազորությունները կանոնակարգելու մասին» 2000թ. օրենքը («Օրենք 2000»), ի թիվս այլ հարցերի, կանոնակարգում էր հաղորդակցությունների գաղտնալուծումները: Հեռահաղորդակցությունների (Օրինական բիզնես պրակտիկայի) 2000 կանոնակարգերը բխում էին Օրենք 2000-ից և ուժի մեջ էին մտել 2000թ. հոկտեմբերի 24-ին: Կանոնակարգերը սահմանում էին այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում գործատուները կարող էին գրանցել կամ հսկել աշխատողների հաղորդակցությունը (ինչպես, ասենք, էլեկտրոնային փոստը կամ հեռախոսագրույցները)՝ առանց աշխատողի կամ հաղորդակցության այլ կողմի գիտության: Գործատուներից պահանջվում էր համապատասխան քայլեր ձեռնարկել աշխատողներին հաղորդակցության գաղտնալուծումների հնարավորության մասին իրազեկելու առումով:

B. Փոխհատուցումը գործատուի կողմից վստահությունը չարաչափելու և գաղտնիությունը խախտելու համար

21. Լորդերի պալատը *Malik v Bank of Credit and Commerce International SA* [1997] IRLR 462 գործով հաստատել էր, որ իրավունքի տեսակետից աշխատանքային յուրաքանչյուր պայմանագրի նկատմամբ կիրառելի է այն ընդհանուր պայմանը, որ գործատուն, «առանց հիմնավոր և պատշաճ պատճառների»:

նի, չպետք է կատարի այնպիսի դիտավորյալ գործողություններ, որոնց արդյունքում կարող են խաթարվել կամ լրջորեն խաթարվել գործատուի և աշխատողի միջև առկա՝ վստահության և գաղտնիության վրա հիմնված հարաբերությունները»։ *Malik*-ի գործով Լորդերի պալատը մտահոգություն էր հայտնել, այսպես կոչված, «անվանարկման դիմաց փոխհատուցում» տրամադրելու առնչությամբ, այն դեպքերում, երբ նախկին աշխատողը հետագայում ի վիճակի չի լինում աշխատանք գտնել՝ նախկին գործատուի անպարկեշտության պատճառով։ Վստահությունը և գաղտնիությունը պահպանելու պարտավորությունը խախտելու համար տրամադրվող փոխհատուցման հարցերը քննարկելիս Լորդերի պալատը մտահոգված էր բացառապես աշխատանքի շուկայում առկա հիմնախնդիրների պատճառով առաջացած ֆինանսական կորուստների դիմաց փոխհատուցում տրամադրելու հարցով։ Լորդ Նիքոլը հստակ ընդգծել էր. «տվյալ դեպքում ես մտահոգված չեմ վիրավորված զգացմունքների դիմաց փոխհատուցումը բացառելու խնդրով. մտահոգությունը վերաբերում է միայն ֆինանսական կորուստներին»։

22. Նեղացնելով վստահության և գաղտնիության ենթադրվող պայմանի շրջանակը, լորդ Սթեյնը *Malik*-ի գործի շրջանակներում նշել է հետևյալը.

«Վստահության և գաղտնիության ենթադրվող փոխադարձ պարտավորությունը կիրառություն է գտնում միայն այն դեպքերում, երբ գործատուի վարքագծի համար «հիմնավոր և պատշաճ պատճառ» չկա, և եթե այդ վարքագիծը նպատակ ունի խաթարել կամ լրջորեն վնասել վստահության և գաղտնիության վրա հիմնված հարաբերությունները։ Դրանով ենթադրվող պարտավորության հավանական ազդեցության ծավալը և շրջանակները սահմանափակվում են»։

C. Իրավախախտումները հանրային հաստատություններում

23. Իրավախախտումը համարվում է հանրային հաստատությունում կատարված, եթե հանրային ծառայողը (a) իր լիազորություններն իրականացնելիս դիտավորություն է ունեցել վնաս պատճառել տուժողին կամ (b) գործել է տուժողի նկատմամբ իր գործողությունների անօրինականությունը գիտակցելով կամ անփութորեն անտեսելով այդ հանգամանքը, ինչպես նաև՝ գիտակցելով տուժողին կամ անձանց այն խնքին, ում վերջինս պատկանում է, վնաս պատճառելու հավանականությունը կամ անփութորեն անտեսելով այդ հանգամանքը (տես *Three Rivers D.C. v. Bank of England (No.3)* (HL) [2000] WLR 1220 գործը)։

D. Տեղեկատվության պաշտպանության մասին 1984թ. օրենք

24. Դիմողի կողմից վերոհիշյալ գործողությունները բողոքարկելու ժամանակ Տեղեկատվության պաշտպանության մասին 1984թ. օրենքը (Օրենք 1984) կարգավորում էր այն, թե տեղեկատվություն տիրապետող անձինք և կազմակերպությունները (այսպես կոչված՝ տեղեկատվության տիրապետողներ) ինչպես պետք է մշակեն կամ օգտագործեն այդ տեղեկատվությունը։ Այն որոշակի դատական պաշտպանության միջոց էր տրամադրում այն անհատներին, ում անձնական տեղեկատվությունն օգտագործվել է այլ նպատակներով։ Օրենք 1984-ը ներկայումս փոխարինվել է Տեղեկատվության պաշտպանության մասին 1998 օրենքով։

25. Օրենք 1984թ.-ի 1-ին բաժինը սահմանում է հետևյալ պայմանները.

«(2) Տեղեկատվությունն այն տեղեկություններն են, որոնք պահպանված են այնպես, որ կարող են մշակվել ավտոմատ գործող սարքավորման կողմից՝ այդ նպատակով տրված հրահանգներին համապատասխան։

(3) Անձնական տեղեկատվությունն այն տեղեկություններն են, որոնք վերաբերում են անհատի կյանքին, և որոնց միջոցով (կամ այդ տեղեկատվության և տեղեկատվության տիրապետողի տրամադրության տակ առկա այլ տեղեկությունների միջոցով) հնարավոր է պարզել այդ անհատի ինքնությունը։

(4) Տեղեկատվության սուբյեկտն այն անհատն է, ում վերաբերում են անձնական տեղեկությունները։

(5) Տեղեկատվությունն օգտագործողն այն անձն է, ով տիրապետում է տեղեկատվությանը, իսկ անձը տիրապետում է տեղեկատվությանը, եթե.

(a) տեղեկատվությունը կազմում է վերոհիշյալ 2-րդ կետում նշված կարգով այդ անձի կողմից կամ նրա անունից մշակված կամ մշակվելիք տեղեկատվության ամբողջության մի մասը, և

(b) այդ անձը... տնօրինում է այդ ամբողջության մաս կազմող տեղեկատվության բովանդակությունը և օգտագործումը, և

(c) տեղեկատվությունն այնպիսի տեսքով է, ինչ տեսքով մշակվել են կամ մշակվելու են (a) ենթակետում նշված կարգով...

(7) «Մշակում»՝ տեղեկատվության առունով նշանակում է տեղեկատվությունը փոփոխելը, լրացնելը, ջնջելը, վերադասակարգելը կամ այդ տեղեկատվությունից քաղվածքներ կատարելը, իսկ անձնական տեղեկատվության դեպքում՝ նշված գործողություններից որևէ մեկը կատարելը՝ տեղեկատվության սուբյեկտին հղում կատարելով:

(9) Տեղեկատվության հրապարակումը ներառում է նաև տեղեկատվության մի մասի հրապարակումը...»:

26. «Տեղեկատվության պաշտպանության սկզբունքները», որ պետք է հարգվեն տեղեկատվության տիրապետողների կողմից, սահմանված են օրենքի 1-ին մասից մինչև հավելված 1: Դրանք են.

«1. Անձնական տեղեկատվության մեջ պարունակվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեն, և անձնական տեղեկատվությունը պետք է մշակվի պատշաճ և օրինական կարգով:

2. Անձնական տեղեկատվությունը պետք է պահվի միայն մեկ կամ մի քանի, որոշակի և օրինական նպատակներով...:

4. Որևէ նպատակով պահվող անձնական տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ ու էական և ոչ ավելի, քան անհրաժեշտ է այդ նպատակի կամ նպատակների համար»:

27. Օրենքի 1984թ.-ի 23-րդ բաժինը, անձնական տեղեկատվության չթույլատրված հրապարակման դեպքում, տեղեկատվության սուբյեկտին փոխհատուցման իրավունքներ է վերապահում:

«(1) Անձը, ում վերաբերյալ անձնական տեղեկություններ են պահվում տեղեկատվություն գործածողի կողմից... և ում վնաս է պատճառվել.

(c) ... տեղեկատվությունն առանց թույլտվության հրապարակելու կամ տեղեկատվություն մուտք գործելու արդյունքում՝

իրավունք ունի փոխհատուցում պահանջելու տեղեկատվությունը գործածողից՝ այդ վնասի կամ... հրապարակման կամ մուտք գործելու արդյունքում անհատին պատճառված սթրեսի դիմաց»:

28. Օրենքի 1984թ.-ի նաև ստեղծվել է Տեղեկատվության պաշտպանության գործավարի հաստիք, որի պարտականությունն է՝ խթանել տեղեկատվություն գործածողների կողմից տեղեկատվության պաշտպանության սկզբունքների պահպանումը: Օրենքի 10-րդ բաժինը սահմանում է քրեական պատասխանատվություն՝ հետևյալ շարադրանքով.

«(1) Եթե գործավարը համոզվում է, որ գրանցված անձը խախտել է կամ խախտում է տեղեկատվության պաշտպանության սկզբունքներից որևէ մեկը, ապա նա կարող է գրություն (հանձնարարական) ուղարկել վերջինիս՝ նրանից պահանջելով ձեռնարկել... այնպիսի քայլեր, որոնք անհրաժեշտ են խնդրո առարկա սկզբունքին կամ սկզբունքներին համապատասխանելու համար:

(2) Հանձնարարական ուղարկելու հարցը որոշելիս գործավարը պետք է պարզի՝ խախտման արդյունքում որևէ անձի վնաս կամ սթրես պատճառվե՞լ է, թե՞ ոչ:

...

(9) Հանձնարարականի պահանջները կատարելուց հրաժարվող անձը ենթակա է քրեական պատասխանատվության»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

29. Դիմողը վիճարկել է, որ տեղի ունեցած հսկողությունը հանդիսացել է միջամտություն անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իր իրավունքին՝ նախատեսված 8-րդ հոդվածով, որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

30. Կառավարությունը ժխտել է այդ փաստարկները:

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Կառավարությունը

31. Կառավարությունն ընդունել է, որ Քոլեջը հանրային մարմին է, որի գործողությունների համար, համաձայն Կոնվենցիայի, պետությունն ուղղակի պատասխանատվություն է կրում:

32. Չնայած մինչև 1999թ. նոյեմբեր դիմողի հեռախոսագանգերը, էլեկտրոնային նամակները և ինտերնետի գործածությունը որոշակի հսկողության են ենթարկվել, այդ հսկողությունը չէր վերածվել հեռախոսագանգերի գաղտնալսման կամ դիմողի այցելած գործած կայքէջերի բովանդակության վերլուծության: Յետևաբար, հսկողությունը հանդիսացել է ոչ այլ ինչ, քան ավտոմատ կերպով թողարկված տեղեկությունների վերլուծություն՝ պարզելու համար՝ Քոլեջի գույքն անձնական նպատակներով չափից ավելի չի՞ գործածվում, արդյոք, ինչն ինքնին չի հանդիսանում անձնական կյանքի կամ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի ռոնահարում: Կարող է ուսումնասիրվել *P.G. and J.H. v. the United Kingdom*, թիվ 44787/98, ECHR 2001-IX գործը, քանի որ այն վերաբերում է հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման դեպքի: Նշանակալի տարբերություններ կային *Halford v. the United Kingdom*, 1997թ. հունիսի 25-ի վճիռ, *Reports of Judgments and Decisions* 1997-III գործի համեմատությամբ (մասնավորապես՝ գործատուի դեմ դիմողի ներկայացրած հայցի առնչությամբ), որում գաղտնալսվել էին դիմողի մասնավոր հեռախոսով կայացած խոսակցությունները:

33. Եթե անգամ որոշվեր, որ հեռախոսի, էլեկտրոնային փոստի և ինտերնետի գործածության վերլուծությունը հանդիսացել է միջամտություն մասնավոր կյանքին կամ նամակագրությանը, Կառավարությունը պնդել է, որ միջամտությունն արդարացված է եղել:

34. Առաջին հերթին, միջամտությունը հետապնդել է այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու իրավաչափ նպատակ՝ երաշխավորելով, որ հանրային միջոցներից ֆինանսավորվող գործատուի կողմից տրամադրված գույքը չչահագործվի այլ նպատակներով: Երկրորդ, միջամտությունը ներպետական օրենսդրությամբ նախատեսված է եղել այն առումով, որ Քոլեջը՝ որպես կանոնադրական մարմին, լիազորված էր տալ և բարձրագույն կրթություն և կատարել դրա համար անհրաժեշտ և նպատակամետ գործողություններ, պատշաճ հսկողություն իրականացնել իր գույքի նկատմամբ՝ իր կանոնադրական խնդիրների իրականացումն ապահովելու համար: Ողջամտորեն պետք է ենթադրվեր, որ հանրային միջոցների հաշվին կանոնադրական մարմնի տրամադրած գույքը չէր կարող չափից ավելի գործածվել անձնական նպատակներով, և որ Քոլեջը կարող էր նախաձեռնել տվյալների վերլուծություն՝ անձնական նպատակներով գույքի օգտագործման դեպքերն ի հայտ բերելու և հետազայում քննություն իրականացնելու համար: Այս առումով, իրադրությունը նման է *Peck v. the United Kingdom*, թիվ 44647/98, ECHR 2003-I գործում նկարագրված իրադրությանը:

35. Եվ վերջապես, գործողությունները եղել են անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև համարժեք, քանի որ միջամտությունն իրականացվել է ոչ ավելի, քան անհրաժեշտ է՝ գույքն անձնական նպատակներով չափից ավելի օգտագործելը պարզելու և քննություն իրականացնելու նպատակով:

2. Դիմողը

36. Դիմողը չի ընդունել, որ իր էլեկտրոնային նամակները չեն ընթերցվել և որ իր հեռախոսային խոսակցությունները չեն գաղտնալսվել, այլ առարկել է՝ նշելով, որ Կառավարության ներկայացրած փաստերին հավատալու դեպքում անգամ ակնհայտ է, որ տեղի է ունեցել որոշակի հսկողություն, որը հանգեցրել է միջամտության անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իր իրավունքին:

37. Դիմողը հիշատակել է վիճարկվող խախտմանը հաջորդած օրենսդրությունը, մասնավորապես՝ Յետաքննության լիազորությունները կանոնակարգելու մասին 2000թ. օրենքը և Յեռահաղորդակցությունների 2000 կանոնակարգերը (տես վերը՝ կետ 20), որոնց միջոցով, նրա կարծիքով, Կառավարությունն ակնհայտորեն ընդունել է, որ նման հսկողությունը հանգեցրել է 8-րդ հոդվածով նախատեսված միջամտության, և փորձել է օրինականացնել այն: Քանի որ այդ օրենքներն ուժի մեջ էին մտել 2000 թվականին, միջամտության իրավական հիմքերը հաջորդել են սույն գործով տեղի ունեցած իրադարձություններին: Յետևաբար, միջամտությունը ներպետական օրենսդրությունում իրավական հիմքեր չունեցող և միանգամայն տարբեր էր *Peck* գործով ցուցաբերված մոտեցումից (տես վերը՝ կետ 34), որով

տեղական իշխանությունը կանոնադրությամբ հատուկ լիազորվել էր տեսագրել իր տարածքում տեղի ունեցող իրադարձությունները: Սույն գործով Քոլեջն օժտված չէր իր աշխատողներին զաղտնալսելու հատուկ լիազորությամբ, իսկ կանոնադրությամբ սահմանված լիազորությունները թույլ չէին տալիս ողջամտորեն ենթադրել նման զաղտնալսումները:

38. Դիմողը պնդել է, որ Քոլեջի գործողությունները ոչ անհրաժեշտ և ոչ էլ համարժեք են եղել: Գոյություն ունեին հիմնավոր և նվազ անհարմարություններ պատճառող միջոցներ, որոնք Քոլեջը կարող էր կիրառել, ինչպես, ասենք, աշխատողների կողմից հեռախոսի, ինտերնետի և էլեկտրոնային փոստի գործածության վերաբերյալ քաղաքականություն մշակելը և հրապարակելը:

B. Դատարանի գնահատականը

39. Դատարանը նկատի է առնում այն փաստը, որ Կառավարությունն ընդունել է, որ Քոլեջը հանրային մարմին է, որի գործողությունների համար, Կոնվենցիայի իմաստով, պատասխանատվություն էր կրում: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ 8-րդ հոդվածի վերաբերյալ սույն գործով հարկ է քննության առնել Պետության վրա դիմողի անձնական կյանքին և նամակագրությանը չմիջամտելու նեգատիվ պարտավորություն դնելու հարցը, ինչպես նաև գտնում է, որ բնակարանի կամ ընտանեկան կյանքի հետ կապված խնդիրներ առկա չեն:

40. Այնուհետև Դատարանը նշում է, որ կողմերը տարածայնություններ ունեն հսկողության բնույթի և տևողության առնչությամբ: Այնուամենայնիվ, Դատարանը նպատակահարմար չի գտնում քննել այդ վեճը, քանի որ Կառավարության կողմից շարադրված փաստերն ընդունելու դեպքում անգամ 8-րդ հոդվածի հետ կապված խնդիր առաջանում է:

1. Անձնական կյանքի սահմանման շրջանակները

41. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ աշխատավայրից կատարվող հեռախոսազանգերը, առաջին հայացքից, 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ներառված են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների շրջանակներում (տե՛ս վերոհիշյալ *Halford* գործը, կետ 44, և *Amann v. Switzerland* [GC], թիվ 27798/95 գործը, կետ 43, ECHR 2000-II): Տրամաբանորեն հետևում է, որ աշխատավայրից ուղարկված էլեկտրոնային նամակները նմանապես պետք է պաշտպանվեն 8-րդ հոդվածով, ինչպես և ինտերնետի անձնական գործածության նկատմամբ հսկողության արդյունքում ստացված տեղեկությունները:

42. Սույն գործով դիմողը չէր նախագուշացվել, որ իր զանգերը հսկողության են ենթարկվելու, հետևաբար, նա ողջամտորեն ակնկալել է, որ աշխատավայրի հեռախոսով կատարված հաղորդակցության զաղտնիությունն ապահովված է (*Halford*, տես վերը՝ կետ 45): Նույնը պետք է ակնկալվեր դիմողի էլեկտրոնային փոստի և ինտերնետի առնչությամբ:

2. 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտության առկայությունը

43. Դատարանը մատնանշում է, որ հեռախոսային խոսակցությունների ժամանակի ու տևողության և, նասնավորապես, զանգահարված համարների վերաբերյալ տեղեկությունների օգտագործումը կարող է խնդրո առարկա դառնալ 8-րդ հոդվածի շրջանակներում, քանի որ նման տեղեկությունները հանդիսանում են «հեռախոսով կատարված հաղորդակցության բաղկացուցիչ մասը» (տե՛ս *Malone v. the United Kingdom*, 1984թ. օգոստոսի 2-ի վճիռ, Series A թիվ 82, կետ 84): Այն փաստը, որ այդ տեղեկությունները Քոլեջը կարող էր ձեռք բերել նաև օրինական կարգով՝ հեռախոսային հաշիվների տեսքով, չի կարող խոչընդոտել 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին միջամտության ճանաչմանը (*նույն տեղում*): Ավելին, անհատի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ հավաքելը ևս ընդգրկվում է 8-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման շրջանակում (տե՛ս վերոհիշյալ *Amann* գործը, կետ 65): Հետևաբար, անհարկի է նշել, որ քոլեջի հավաքած տեղեկությունները չեն հրապարակվել կամ կարգապահական կամ այլ նպատակներով չեն օգտագործվել դիմողի դեմ:

44. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողի հեռախոսային խոսակցություններից, ինչպես նաև նրա էլեկտրոնային փոստից և ինտերնետի գործածությունից անձնական տեղեկություններ հավաքելը և պահելը՝ առանց վերջինիս գիտության, հանդիսացել է միջամտություն դիմողի անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին՝ 8-րդ հոդվածի իմաստով:

3. Միջամտության համապատասխանություն օրենքին

45. Դատարանը մատնանշում է, որ նախադեպային իրավունքը բազմիցս հաստատել է, որ «օրենքին համապատասխան» արտահայտությունը ենթադրում է, որ ներպետական օրենսդրությունը պետք է նախատեսի 8-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքներին հանրային իշխանության մարմինների կամայական միջամտությունից պաշտպանելու միջոց (դա բխում է 8-րդ հոդվածի 1-ին մասի առարկայից և նպատակից): Առավել ևս այնպիսի հարցերում, ինչպիսին խնդրո առարկա հսկողությունն է՝ հաշվի առնելով հանրային վերահսկման բացակայությունը և լիազորությունների չարաշահման ռիսկը (տե՛ս վերոհիշյալ *Halford* գործը, կետ 49):

46. Այս արտահայտությունը պահանջում է ոչ միայն համապատասխանություն ներպետական օրենսդրությանը, այլև վերաբերում է այդ օրենսդրության որակին՝ պահանջելով, որ այն համապատասխանի օրենքի գերակայության սկզբունքին (ի թիվս այլ գործերի, տե՛ս *Khan v. the United Kingdom*, 2000թ. մայիսի 12-ի վճիռ, *Reports of Judgments and Decisions* 2000-V, կետ 26; վերոհիշյալ *P.G. and J.H. v. the United Kingdom*, cited above, կետ 44): Կանխատեսելիության պահանջը բավարարելու համար օրենսդրությունը եզրույթների առումով պետք է լինի բավականաչափ պարզ, որպեսզի անհատներին պատշաճ կերպով մատնացույց անի այն հանգամանքներն ու պայմանները, որոնց առկայության դեպքում իշխանությունները լիազորված են դիմելու այդ միջոցներից որևէ մեկին (տե՛ս վերոհիշյալ *Halford* գործը, կետ 49, և *Malone* գործը, կետ 67):

47. Դատարանին չհամոզեց Կառավարության այն փաստարկը, որ Քոլեջն իր կանոնադրությամբ լիազորված էր իրականացնել «անհրաժեշտ և նպատակահարմար գործողություններ»՝ բարձրագույն կրթություն տալու նպատակին հասնելու համար, և գտնում է, որ փաստարկը համոզիչ չէ: Ավելին, Կառավարությունը պետք է չվիճարկի, որ խնդրո առարկա ժամանակահատվածում գործել են դրույթներ (անկախ նրանից՝ այդ դրույթները սահմանված են ընդհանուր ներպետական օրենսդրությունում, թե՛ Քոլեջի կանոնակարգերում), որոնք կարգավորել են այն դեպքերը, երբ գործատուները լիազորված են հսկել աշխատողների կողմից հեռախոսի, էլեկտրոնային փոստի կամ ինտերնետի գործածումը: Բացի դրանից, ակնհայտ է, որ նման դրույթ նախատեսած Զեռահաղորդակցությունների (Օրինական բիզնես պրակտիկայի) 2000 կանոնակարգերը (որոնք ընդունվել են «Չեռաքննության լիազորությունները կանոնակարգելու մասին» 2000թ. օրենքի հիման վրա) ուժի մեջ չէին խնդրո առարկա ժամանակահատվածում:

48. Զամապատասխանաբար, նկատի ունենալով, որ տվյալ ժամանակ գործող ներպետական օրենսդրությունը հսկողությունը չէր կարգավորում, սույն գործով միջամտությունը չի եղել «օրենքին համապատասխան», ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով: Դատարանը չի բացառում, որ աշխատողի կողմից աշխատավայրում հեռախոսի, էլեկտրոնային փոստի կամ ինտերնետի գործածության նկատմամբ հսկողություն իրականացնելը, իրավաչափ նպատակ հետապնդելու հետ կապված որոշակի իրադրություններում, կարող է համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իր վերոհիշյալ եզրակացությունը, սույն գործով այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելը Դատարանն անհրաժեշտ չի համարում:

49. Զետևաբար, այդ առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ԶՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ՝ 8-ՐԴ ԶՈՂՎԱԾԻ ԶԱՄԱԿՆՈՒԹՅԱԲ

50. Դիմողը հայտնել էր, որ իր վիճարկած 8-րդ հոդվածի խախտման հարցով ներպետական պաշտպանության արդյունավետ միջոցները բացակայել են, հետևաբար, տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

51. Նկատի առնելով 8-րդ հոդվածի վերաբերյալ իր կայացրած որոշումը (տե՛ս վերը՝ կետ 48), Դատարանը Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման վերաբերյալ քննությունն անհրաժեշտ չի համարում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

52. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընծեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

53. Նյութական վնասի փոխհատուցում դիմողը չի պահանջել, սակայն առանց գումարի չափ նշելու՝ պահանջել է ոչ նյութական վնասների փոխհատուցում՝ պատճառված անհանգստության, վատ տրամադրության և անքնության հետևանքով կրած սթրեսի դիմաց:

54. Կառավարությունը նշել է, որ դիմողի ներկայացրած հաշվետվությունում նշված չէ, թե սթրեսը պատճառվել է իր բողոքի հետևանք հանդիսացած փաստերի արդյունքում: Բացի դրանից, Կառավարության կարծիքով՝ խախտման ճանաչումն ինքնին պետք է համարվի բավարար արդարացի փոխհատուցում, ինչպես Դատարանը վճռել է մի շարք գործերով՝ կապված ոստիկանության կողմից հանցագործության մեջ կասկածվող անձանց հաղորդակցությունը գաղտնալսելու վերաբերյալ զանգատների հետ (տե՛ս *Taylor-Sabori v. the United Kingdom*, թիվ 47114/99, կետ 28, 22 հոկտեմբերի 2002թ., *Hewitson v. the United Kingdom*, թիվ 50015/99, կետ 25, 27 մայիսի 2003թ., և *Chalkley v. the United Kingdom*, թիվ 63831/00, կետ 32, 12 հունիսի 2003թ. գործերը): Ավելին, քանի որ բողոքի առարկա գործողություններն իրենցից ընդամենը հսկողություն են ներկայացրել, այլ ոչ թե գաղտնալսում, ապա նման միջամտության լրջությունը շատ ավելի նվազ է, քան վերը հիշատակված դեպքերում:

55. Դատարանը նկատի է առնում Կառավարության հիշատակած գործերը, սակայն նաև հիշեցնում է, որ վերոհիշյալ *Halford*-ի գործով (կետ 76), որը վերաբերում էր գործատուի կողմից աշխատողի մասնավոր հեռախոսային խոսակցությունների գաղտնալսմանը, վճռվել էր պարտավորեցնել Կառավարությանը վճարել 10.000 մեծբրիտանական ֆունտ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Սույն գործով կատարելով անկողմնակալ գնահատում՝ Դատարանը որոշում է, որ դիմողին պետք է վճարվի 3.000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

B. Ծախքեր և ծախսեր

56. Որպես իրավաբանական ծախսերի փոխհատուցում դիմողը պահանջել է, ընդհանուր առմամբ, 9.363 մեծբրիտանական ֆունտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը: Այս գումարը ներառում էր փաստաբանին և նրա օգնականին վճարված 7.171.62 մեծբրիտանական ֆունտը, 1.556.88 ֆունտի չափով վճարումները, իսկ մնացածը կազմում էին հետազայում կատարելիք վճարումները:

57. Կառավարությունը նշել է, որ փաստաբանների կողմից գանձված ժամավճարների չափը և գործի քննության ժամանակ առաջարկված սակագները չափազանցված են: Ավելին, դիմողի նախնական դիմումում ներառված էին բազմաթիվ այլ զանգատներ, որոնք Դատարանն անընդունելի էր համարել, հետևաբար, իրավաբանական ծախսերի այդ մասը փոխհատուցման ենթակա չէ: Կառավարության կարծիքով՝ 2.000 մեծբրիտանական ֆունտը միանգամայն բավարար էր կատարված ծախսերը փոխհատուցելու համար:

58. Ընդունված նախադեպերին համապատասխան՝ Դատարանը ծախքերի և ծախսերի փոխհատուցում կտրամադրի ճանաչված խախտումների մասով, և այնչափով, որքանով կատարված ծախսերը եղել են փաստացի և անհրաժեշտ, իսկ դրանց չափը՝ հիմնավորված (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Schouten and Meldrum v. the Netherlands*, 9 դեկտեմբերի 1994թ., Series A թիվ 304, էջեր 28-29, կետ 78, և *Lorsn and Others v. the Netherlands*, թիվ 52750/99, կետ 103, 4 փետրվարի 2003թ.): Վերոհիշյալ բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանը որոշում է, որ դիմողին պետք է վճարվի 6.000 եվրո՝ որպես իրավաբանական ծախքերի և ծախսերի փոխհատուցում՝ չհաշված հնարավոր ավելացված արժեքի հարկը:

C. Տուգանային տոկոսներ

59. Դատարանը նպատակահարմար է համարում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում,
2. Վճռում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման վերաբերյալ քննությունն անհրաժեշտ չէ:
3. Վճռում է, որ.

(a) Պատասխանող պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան դիմողին ներքոնշյալ գումարները վճարի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, որոնք պետք է հաշվվեն ֆունտ ստեռլինգով՝ փոհատուցման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքին համապատասխան,

(i) 3.000 (երեք հազար) եվրո՝ ոչ նյութական վնասի դիմաց,

(ii) 6.000 (վեց հազար) եվրո՝ ծախքերի և ծախսերի դիմաց,

(iii) այդ գումարներից գանձման ենթակա բոլոր տեսակի հարկային պարտավորությունների գումարը,

(b) վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

4. Մերժում է դիմողի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2007թ. ապրիլի 3-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն: